# ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ
«NEW GENERATION» HUMANITARIAN NGO

# 13
Դեկտեմբերի 16, 2015

## ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

# ՔՆՆԱՐԿՈՒՄ

Human Rights

Bundesrepublik Deutschland
Auswärtiges Amt

OPEN SOCIETY FOUNDATIONS ARMENIA

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ «NEW GENERATION» HUMANITARIAN NGO

Հայաստան 0019, ք.Երևան, Բաղրամյան 49, բն. 7
Apt.7, 49 Baghramyan str. Yerevan 0019, Armenia
+374 60 378989
+374 60 478989
newgenerationngo@gmail.com
http://ngngo.net/

2015 թ.-ի դեկտեմբերի 16-ին տեղի ունեցավ **«Խտրականություն. առկա հիմնախնդիրները և պայքարի միջոցները Հայաստանում»** թեմայով քննարկումը, որը կազմակերպել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դեսպանության և Բաց Հասարակության Հիմնադրամներ / Հայաստանի ֆինանսական աջակցությամբ:

Հանդիպման նպատակն էր՝ նպաստել Հայաստանում խտրականության դեմ պայքարի գործընթացին, հանրայնացնելով գոյություն ունեցող հիմնախնդիրները և փորձել համագործակցության երկխոսություն սկսել պետական, միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության կառույցների միջև:

Հաղիպմանը ներկա էին ներկայացուցիչներ ՀՀ-ում գործող դեսպանատների, այլ դիվանագիտական ներկայացուցչությունների, պետական կառույցների և տեղի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և անհատներ, լրագրողներ:

Հանդիպմանը բացման խոսքով հանդես եկավ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դեսպանության ներկայացուիչ պարոն Վիլկե Ռեյները, ով ողջունեց և կարևորեց կազմակերպված միջոցառումը՝ հայտարարելով որ Գերմանիայի Դաշնային Հարապետությունը դեմէ խտրականության որևէ տեսակի դրսևորմանը և ուրախ է աջակցելու այն կազմակերպություններին, որոնք պայքարում են խտրականության դեմ: Նա հատուկ շնորհակալություն հայտնեց Բաց Հասարկության Հիմնադրամներ / Հայաստան-ին միջոցառմանը աջակցելու և «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին միջոցառումը կազմակերպելու և խնդրի շուրջ բոլոր դերակատարներին համախմբելու և երկխոսության հարթակ ստեղծելու համար:

Բաց Հասարակության Հիմնադրամներ / Հայաստան-ի տնօրեն Լարիսա Մինասյանը ևս ողջունեց ներկաներին և կարևորեց նման հարթակ ստեղծելու փաստը: Նա նշեց, որ Բաց Հասարակության Հիմնադրամներ / Հայաստան կազմակերպությունը առավելագույնս ուշադրություն է դարձնում խտրականությանն առնչվող խնդիրներին և շնորհակալություն հայտնեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դեսպանությանը, ինչպես նաև այն մյուս միջազգային կառույցներին, որոնք նույնպես ակտիվ ներգրավված են հակախտրականության քաղաքականության ձևավորման գործընթացներում Հայաստանում:

*«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը մոդերացրեց հրավիրված խոսնակների ելույթները ըստ օրակարգի, որի շրջանակներում խտրականությանն առնչվող ոլորտային խնդիրներով հանդես եկան՝*

**Արթուր Սաքունց** (Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ՀԿ)

- Խտրականության առկայության իրավիճակը և դրա դեմ պայքարի միջոցները ՀՀ Զինված Ուժերում

**Ռուբեն Սարգսյան** (ՀՀ Արդարադատության նախարարության ՔԿՀ-ների դիտորդական խումբ)

-Խտրականության առկայության իրավիճակը և դրա դեմ պայքարի միջոցները ՀՀ ՔԿՀ-ներում:

**Ստեփան Դանիելյան** (Համագործակցություն հանուն ժողովրդավարության ՀԿ)

-Կրոնական փոքրամասնությունների նկատմամբ խտրականության առկայության իրավիճակը և դրա դեմ պայքարի միջոցները

**Լարա Ահարոնյան** (Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ)

-Հայաստանում կանանց նկատմամբ և գենդերային հիմքով խտրականության առկայության իրավիճակը և դրա դեմ պայքարի միջոցները:

**Ռոբերտ Ռնազյան** («Հայաստանի Հելսինկյան Կոմիտե» ՀԿ)

-Ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրականության առկայության

**Սերգեյ Գաբրիելյան** ( «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ)

-ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության առկայության իրավիճակը և դրա դեմ պայքարի միջոցները

**Վիոլետա Զոպունյան** (Իրավունքի Զարգացման Կենտրոն ՀԿ)

-Առողջապահության ոլորտում գոյություն ունեցող խտրականության երևույթները:

*Ոլորտային խնդիրների նկարագրությունից հետո Բաց Հասարակության Հիմնադրամներ / Հայաստան-ի փոխտնօրեն Դավիթ Ամիրյանը հանդես եկավ ողջույնի խոսքով և մոդերացրեց պետական կառույցների և միջազգային, տեղական ՀԿ-երի կողմից Հայաստանում խտրականության դեմ պայքարին ուղղված ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ներկայացումը/զեկույցը:*

Ներկայացման խոսքով հանդես եկան հետևյալ կառույցների ներկայացուցիչները՝

- ՀՀ Արդարադատության նախարարություն
- Եվրասիա Համագործակցության Հիմնադրամ / Հայաստան
- ԲՀՀ Հայաստան

Հանդիպման ավարտին, որպես վերջաբան ձայնը տրվեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ ներկայացուցիչ Արման Սահակյանին, ով ներկայացրեց Բաց Հասարակության Հիմնադարմաներ / Հայաստան-ի կողմից ֆինանսական աջակցություն ստացած «Երիտասարդներն ընդդեմ խտրականության» ծրագիրը, որի որպես վերջնական արդյունք ձևավորված ՀՀ կառավարությանը և Ազգային Ժողովին ուղղված հակախտրականության մասին ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտության մասին կոչը /ստորագրված ավելի, քան 40 մարզային ՀԿ և պետական ոլորտի ներկայացուցիչների կողմից/ ընթերցվեց բարձրաձայն: